

ԱՇԽԱՏԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

ԿՈՎԻԴ-19-ԻՆ

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ



ԿՈՎԻԴ-19-ԻՆ

ՊՏՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ
ԱԶՍԱԶՐԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ



Ներածություն

Կորոնավիրուսի բռնկումը, որն սկսվեց 2019 թվականի վերջին (ԿՈՎԻԴ-19) տարածվեց արագ և ամբողջ աշխարհում: 2020 թվականի հունվարի 30-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) ԿՈՎԻԴ-19-ի բռնկումը հայտարարեց հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ, իսկ նույն թվականի մարտի 11-ին՝ համավարակ՝ փաստելով նոր հիվանդության համաշխարհային տարածումը:

ԿՈՎԻԴ-19-ին արձագանքելու նպատակով՝ անհրաժեշտ են պատրաստվածություն և արդյունավետ արձագանքում, հատկապես՝ ազատագրկման վայրերում (բանտերում): Քրեակատարողական հիմնարկի անձնակազմը որոշիչ դեր է կատարում հիվանդության տարածման կանխարգելման ջանքերին նպաստելու, ավելի անվտանգ բանտային պայմաններ ստեղծելու և հիվանդության բռնկումներին ժամանակին և արդյունավետ արձագանքելու գործում:

Տեղեկատվական փաթեթի նպատակը

Այս փաթեթում զետեղված տեղեկությունները նախատեսված են բանտերի ղեկավարությանն ու անձնակազմին աջակցելու համար: Այն մշակվել է՝ ապահովելու քրեակատարողական հիմնարկների անձնակազմի, ազատագրկված անձանց և հանրության անվտանգությունն ու ապահովությունը՝ բանտերում ԿՈՎԻԴ-19-ի տարածումը կանխարգելելու և բռնկման դեպքում դրա ազդեցությունը մեղմելու նպատակով: Փաթեթը տրամադրում է հաղորդակցման գործիքներ՝ պարզ և հակիրճ տեղեկատվությամբ ու տեսողական նյութերով:

Տվյալ համատեքստում ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ որոշիչ դեր ունի: Բոլոր հնարավոր ջանքերը պետք է գործադրվեն՝ ԿՈՎԻԴ-19-ի տարածումը ազատագրկման վայրերում կանխելու համար: Կանխարգելիչ միջոցառումները, ամենայն հավանականությամբ, կհանգեցնեն ազատագրկման վայրերի առօրյա ռեժիմի զգալի փոփոխությունների, իսկ ղեկավարությունը ստիպված կլինի բարդ որոշումներ կայացնել, որոնք կսահմանափակեն ազատագրկման վայրերի գործառնություններն ու գործունեությունը: Ազատագրկման վայրում վիրուսի տարածումից հետո ԿՈՎԻԴ-19-ի բռնկմանն արձագանքելը շատ ավելի դժվար կլինի, մասնավորապես՝ գերբնակեցվածության պայմաններում: Բոլոր ջանքերը պետք է գործադրվեն այդ իրավիճակից խուսափելու համար՝ համապատասխան քաղաքականություններին ու դրույթներին համահունչ և ազատագրկման վայրերում մարդու իրավունքների նորմերին համապատասխան ու դրանք պահպանելով:

Գերբնակեցված, նեղվածք և հակասանիտարական պայմաններով ազատագրկման վայրերը զգալի ռիսկեր են պարունակում ազատագրկված անձանց և աշխատակիցների շրջանում ԿՈՎԻԴ-19-ի արագ տարածման տեսանկյունից: Հետևաբար, քրեակատարողական հիմնարկների բեռնաթափումը և ազատագրկված անձանց թվաքանակի կրճատումը պետք է առաջնահերթություն լինեն: Այդ կապակցությամբ, խնդրում ենք էլեկտրոնային նամակ ուղարկել dpo-jcs@un.org հասցեին՝ «ՄԱԿ-ի առաքելության չափանիշների համաձայն բանտերի բեռնաթափման վերաբերյալ ուղեցույցը» ստանալու համար, որը մշակվել է ՄԱԿ-ի Խաղաղապահ գործողությունների վարչության Իրավունքի գերակայության և անվտանգության

հաստատությունների գրասենյակի արդարադատության և ուղղիչ գործողությունների ծառայության կողմից:

Ինչպե՞ս օգտվել այս տեղեկատվական փաթեթից

Տեղեկատվական փաթեթը հիմնված է տարբեր աղբյուրների, այդ թվում՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության «ԿՈՎԻԴ-19-ին պատրաստվածությունը, դրա կանխարգելումը և դրա դեմ պայքարը բանտերում և ազատագրկման այլ վայրերում. ժամանակավոր ուղեցույցի» և ԱՄՆ-ի Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի (ՀՎԿԿ) «Նոր կորոնավիրուսային հիվանդության (ԿՈՎԻԴ-19) կառավարումն ուղղիչ հաստատություններում և կալանավայրերում. ժամանակավոր ուղեցույցի» վրա:

Սույն փաթեթում ներկայացված տեղեկատվությունը գործնական, օգտագործան համար պաստրաստի նյութ է, որը համապատասխանեցվել է վերոհիշյալ համապարփակ ուղեցույցից: Այն սպառիչ չէ և պետք է հարմարեցվի կոնկրետ Ձեր համատեքստին: Լրացուցիչ տեղեկությունների կամ ուղղորդման համար խնդրում ենք օգտվել վերոհիշյալ ռեսուրսային փաստաթղթերից կամ Ձեր տարածաշրջանին վերաբերող ուղեցույցներից:

Հրաժարում

Այս տեղեկատվական փաթեթը ստեղծվել է ՄԱԿ-ի Խաղաղապահ գործողությունների վարչության Իրավունքի գերակայության և անվտանգության հաստատությունների գրասենյակի արդարադատության և ուղղիչ գործողությունների ծառայության (ԱՌԻԳԾ) և ՄԱԿ-ի Վերապատրաստման և հետազոտությունների ինստիտուտի (ՄԱՎՀԻ/UNITAR) խաղաղության պահպանման բաժնի կողմից՝ Շվեդիայի քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության հետ համագործակցությամբ և ՄԱԿ-ի խաղաղապահ և հատուկ քաղաքական առաքելությունների արդարադատության և քրեակատարողական բաժինների, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հետ խորհրդակցությամբ: ԱՌԻԳԾ-ն իր երախտագիտությունն է հայտնում «Health through walls» («Առողջություն՝ պատերից ներս») կազմակերպությանը, Ուղղիչ հիմնարկների և բանտերի միջազգային ասոցիացիային, «Միջազգային բանտային բարեփոխումներ» (Penal Reform International) կազմակերպությանը և «Ուղղիչ հիմնարկների բարեկամների խումբ» նախաձեռնությանը (Groups of Friends of Correction)՝ բանտերում առողջապահական և վարչարարական խնդիրների շուրջ իրենց մասնագիտական խորհրդատվության համար: Գրաֆիկական ամբողջ դիզայնի և նկարագրողումների հեղինակն է Խուան Սեբաստիան Լոպես-Մորֆարտը /www.morphart.co:

Պատրաստվածությունը վճռորոշ նշանակություն ունի ճգնաժամերի արդյունավետ կառավարման համար: Հորդորում ենք օգտագործել այս տեղեկատվությունը և առաջարկվող հաղորդակցման գործիքները՝ քրեակատարողական հիմնարկների անձնակազմերին ԿՈՎԻԴ-19-ին արձագանքելու միջոցները հակիրճ ներկայացնելու համար: Դիտարկեք մի քանի տեղեկատվական հանդիպում կազմակերպելու հնարավորությունը՝ ԿՈՎԻԴ-19-ով պայմանավորված իրավիճակի զարգացումների տարբեր սցենարներ քննարկելու համար, որպեսզի հավաստիանաք, որ անձնակազմի բոլոր անդամները հիմնավոր պատկերացնում ունեն բանտում (բանտերում) ԿՈՎԻԴ-19-ի կանխարգելման և արձագանքման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին:

ԿՈՎԻԴ-19-ԻՆ

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ
ԱԶՍԱԶԲԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ



| ՁԵՎԱԶՍՓ | ՎԵՐՆԱԳԻՐ | ԼՍԱՐԱՆ | ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ |
|---------------------------------|---|---|---|
| 1. Ստուգաթերթիկ | Քրեակատարողական հիմնարկի ստուգաթերթիկ | Քրեակատարողական հիմնարկի ղեկավարություն | Քրեակատարողական հիմնարկի ղեկավարության պատրաստվածության պլանավորում |
| 2. Պաստառ | Ընդհանուր տեղեկություններ վիրուսի մասին | Բոլորը | Փակցնել քրեակատարողական հիմնարկի տարբեր վայրերում |
| 3. Պաստառ | Հիմնական կանխարգելիչ միջոցառումներ | Բոլորը | Փակցնել քրեակատարողական հիմնարկի տարբեր վայրերում |
| 4. Գրպանի քարտ | Տեղեկատվության ներկայացում քրեակատարողական հիմնարկի անձնակազմին | Քրեակատարողական հիմնարկի անձնակազմ | Տրամադրել քրեակատարողական հիմնարկի անձնակազմին |
| 5. Պաստառ | Տեղեկատվության ներկայացում ազատազրկված անձանց /1 և 2/ | Ազատազրկված անձինք | Փակցնել ազատազրկված անձանց կացության տարածքում |
| 6. Պաստառ | Տեղեկատվության ներկայացում այցելուներին | Այցելուներ | Այցելուներին հակիրճ տեղեկատվության ներկայացում: Փակցնել հիմնական մուտքի մոտ և տեսակցության տարածքում |
| 7. Տեղեկատվական ծանոթագրություն | Հաղորդակցում քրեակատարողական հիմնարկի անձնակազմի հետ | Քրեակատարողական հիմնարկի ղեկավարություն | Տրամադրել քրեակատարողական հիմնարկի ղեկավարությանը |
| 8. Տեղեկատվական ծանոթագրություն | Հաղորդակցում ազատազրկված անձանց հետ | Քրեակատարողական հիմնարկի անձնակազմ | Ներկայացնել անձնակազմի տեղեկատվական հանդիպումների ժամանակ և փակցնել անձնակազմի աշխատանքային տարածքում |

| | | | |
|-----------------|---|--|---|
| 9. Ստուգաթերթիկ | Արձագանքում դեպքերին և դրանց կառավարում | Քրեակատարողա- կան հիմնարկի դեկավարություն / անձնակազմ | Ներկայացնել անձնակազմի տեղեկատվական հանդիպումների ժամանակ և փակցնել անձնակազմի աշխատանքային տարածքում |
|-----------------|---|--|---|

Տեսողական նյութերի հորինվածքը հարմար է ԻՍՈ ստանդարտի ցանկացած չափսի թղթի համար (A4, A3, A2): Պատկերներն ու տեքստն առանձնացվել են, որպեսզի հորինվածքը հնարավոր լինի հարմարեցնել՝ ըստ պահանջների: Տպելու համար նիշքերն արտահանել PDF կամ PNG ձևաչափի և տպել: Առանց սահմանների տպագրության համար պատկերի չափսը կարելի է փոփոխել այնքան, որ տեղավորվի տպվելու ենթակա դաշտում, և եզրերից կտրել:

ԿՈՎԻԴ-19-ԻՆ

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ
ԱԶՍԱԶԳՎԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ
ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻՎ



ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կապվեք քրեակատարողական հիմնարկի գլխավոր տնօրենի (պետի) կամ նրա հանձնակատարի հետ և հավաքեք ԿՈՎԻԴ-19-ի համավարակի կառավարման վերաբերյալ բոլոր հասանելի ուղեցույցները:

Կապվեք Առողջապահության նախարարության կամ համարժեք մարմնի, կամ ԱՀԿ-ի տեղական ներկայացուցչի հետ և հայցեք հետևյալ տեղեկությունները՝

ԿՈՎԻԴ-19-ի վերաբերյալ ուղեցույց,

Հաշվետվության պահանջներ,

Քրեակատարողական հիմնարկներին հավանական աջակցության տարբերակներ (ախտորոշիչ թեստերի լրակազմ, անհատական պաշտպանության միջոցներ անձնակազմի համար, բժշկական մեկուսացման հիվանդասենյակներ ԿՈՎԻԴ-19-ի ախտանշաններ ունեցող բանտարկյալների համար):

Քննարկեք մատակարարների հետ սննդի, ջրի, դեղորայքի, օճառի/ախտահանիչների և այլ անհրաժեշտ պարագաների շարունակական կամ մեծաքանակ գնման հնարավորությունը:

Պատրաստեք տեղեկություն Ձեր ազատազրկված անձանց վերաբերյալ.

Որոշարկեք ռիսկի խմբի պատկանող ազատազրկված անձանց՝ ուղեկցող հիվանդություններով կամ առանց (օրինակ՝ հղի կանայք, երեխաների հետ ազատազրկված ծնողներ, շաքարախտով, ասթմայով, ճարպակալմամբ, տուբերկուլոզով, իմունային հիվանդություններով կամ սուր թերսնուցմամբ տառապող ազատազրկված անձինք): Նաև հաշվի առեք տարեցներին, որոնք ԿՈՎԻԴ-19-ով վարակվելու դեպքում լուրջ բարդությունների վտանգի տակ են,

Արդարադատության նախարարության կամ այլ համապատասխան մարմինների հետ քննարկեք քրեակատարողական հիմնարկի ազատազրկված անձանց ազատ արձակելու հնարավորությունը: Ազատ արձակման չափանիշները պետք է սահմանվեն համապատասխան դատական մարմինների կողմից (օրինակ՝ ռիսկային բանտարկյալներ, անհամապատասխան/թերի իրավական փաստաթղթերով կալանավորված անձինք, ոչ մեծ/աննշան/թեթև ծանրության, բռնություն չպարունակող իրավախախտումների համար պատիժ կրող անձինք, անձինք, որոնց պատժի կրման ավարտին մնացել է 6-ից 12 ամսից պակաս):

Համապատասխան իրավապահ մարմինների հետ քննարկեք քրեակատարողական հիմնարկներում նոր ազատազրկվածների թվի կրճատման հնարավորությունը,

Ձեր իրավասության սահմաններում դիտարկեք ազատագրկված անձանց վաղաժամկետ ազատելու տարբերակների հնարավորությունը:

Ստեղծեք արտակարգ իրավիճակներում վարելու երկու առանձին գրանցամատյան.

Ելքի/մուտքի գրանցամատյան քրեակատարողական հիմնարկ մտնող և քրեակատարողական հիմնարկից դուրս եկող բոլոր անձանց (այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի, այցելուների, մատակարարների, ծառայություն մատուցողների) համար: Այս տեղեկությունը արժեքավոր կլինի հիվանդության դեպքերի հետագա մշտադիտարկման համար:

Դիտարկումների գրանցամատյան՝ ԿՌՎԻԴ-19-ի ախտանշաններ ունեցող ազատագրկված անձանց գրանցելու և տվյալ անձի հետ սերտ շփում ունեցած անձանց հայտնաբերելու նպատակով: Ներառեք հետևյալ կատեգորիաները.

Կասկածելի ախտանշանների բացակայություն,

Ախտանշաններ,

Հաստատված վարակ (հնարավորության դեպքում):

(Գրանցումների ձևաչափի նմուշը ներկայացված է ստուգաթերթիկի վերջում):

Քննարկեք ազատագրկված անձանց կողմից անկարգությունները և բանտի անվտանգության հետ կապված միջադեպերը կառավարելու պլաններ, այդ թվում՝ զանգվածային խռովությունների և փախուստի փորձերի դեպքում: Դիտարկեք հնարավոր աջակցություն ստանալու նպատակով տեղի ոստիկանության կամ անվտանգության ուժերի հետ կապ հաստատելու հնարավորությունը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Տրամադրեք տարածք և մշակեք ընթացակարգ՝ ազատագրկման վայր մուտք գործող բոլոր անձանց ստուգելու համար: Սքրինինգային կայանները պետք է բանտի մուտքից դուրս լինեն: ԿՌՎԻԴ-19-ի ախտանշաններ ունեցող և/կամ հաստատված կամ կասկածվող վարակակրի հետ շփում ունեցած ցանկացած անձի (աշխատակից/ այցելու/մատակարար/ծառայություն մատուցող) ՉՊԵՏՔ Է ԹՈՒՅԼ ՏԱԼ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ազատագրկման վայր:

Բանտի մուտքի մոտ և բանտի ողջ տարածքում անձնակազմի, բանտարկյալների և այցելուների համար տեղադրեք լվացարաններ՝ (պարտադիր լվացվելու՝ դեմքը և ձեռքերը կանոնավոր լվանալու համար):

Առանձնացրեք ԿՌՎԻԴ-19-ի ախտանշաններ ունեցող բանտարկյալներին մեկուսացնելու վայր: Այն պետք է լինի ազատագրկման վայրի տարածքում գտնվող առանձին շենքում: Եթե առկա շինություններում նման տարածք չկա, դիտարկեք ժամանակավոր լուծումների հնարավորությունը, օրինակ՝ ազատագրկված անձանց կողմից պարբերաբար այցելվող տարածքներից հեռու տեղադրված մեծ վրաններ:

- Դիտարկեք նոր բանտարկյալների համար 14-օրյա կարանտինի համար տարածք ստեղծելու հնարավորությունը: 14 օր հետո ԿՈՎԻԴ-19-ի ախտանշաններ չունենալու դեպքում տեղափոխեք նրանց ազատազրկվածների ընդհանուր կացարան:
- Մշակեք արտակարգ իրավիճակների ընթացակարգ՝ ԿՈՎԻԴ-19-ի ախտանշաններ ունեցող ազատազրկված անձանց բուժման համար: Ներառեք ԱՊՄ-ի հասանելիության, ազատազրկված անձանց դիմակներ տրամադրելու և նրանց համապատասխան մեկուսացման տարածք ուղեկցելու մասին կետեր: Ազատազրկման վայրի անձնակազմը պետք է տեղեկացված լինի այս ընթացակարգի մասին և անցնի համապատասխանաբար վերապատրաստում:
- Ազատազրկման վայրում ավելի հաճախ իրականացրեք մաքրման և ախտահանման աշխատանքներ.
 - Ախտահանեք այն մակերեսներն ու առարկաները, որոնց հաճախակի են դիպչում, հատկապես ընդհանուր տարածքներում,
 - Լվացեք և ախտահանեք նաև այն մակերեսներն ու առարկաները, որոնք սովորաբար ամեն օր չեն մաքրվում (օրինակ՝ բանտախցերի դռները/ ճաղավանդակները, դռների բռնակները, լույսի անջատիչները, լվացարանի ծորակն ու փականները, սեղանների մակերեսը, զուգարակոնքը, զուգարանի բռնակները, սպորտային/ժամանցի սարքավորումները, հեռախոսախցիկներն ու հեռախոսները, ծածկոցներն ու հագուստը):
- Ապահովեք պատշաճ օդափոխություն՝ հեռացնելով պատուհաններից, ճաղերից, դռներից, ցանկապատերից և դարպասներից օդի հոսքը խոչընդոտող բոլոր իրերը:

ԱՆՁՆԱԿԱԶՄ/ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

- Տեղեկացրեք ազատազրկման վայրի անձնակազմին, որ ԿՈՎԻԴ-19-ի կանխարգելման ու արձագանքման ընթացակարգը ժամանակավորապես կազդի ազատազրկման վայրի սովորական առօրյայի վրա:
- Հավաստիացեք, որ ազատազրկման վայրի անձնակազմն ունի բոլոր անհրաժեշտ տեղեկությունները/քաջատեղյակ է կանխարգելման և արձագանքման ընթացակարգի վերաբերյալ:
- Նախքան բանտ մտնելը բոլոր աշխատողներին ենթարկեք սրբինինգային բուժզննման: ԹՈՒՅԼ ՄԻ՝ ՏՎԵՔ ՄՏՆԵԼ, եթե անձնակազմի անդամն ունի կամ նրա մոտ դրսևորվում են ԿՈՎԻԴ-19-ի ախտանշաններ:
- Եթե անձնակազմի անդամը շփում է ունեցել ԿՈՎԻԴ-19-ով վարակված կամ ախտանշաններ ունեցող անձի հետ, 14 օրվա ընթացքում նրան հանձնարարեք այնպիսի պարտականություններ, որոնք ենթադրում են ազատազրկված անձանց կամ անձակազմի այլ անդամների հետ շփման բացակայություն կամ սահմանափակ շփում (օրինակ՝ պարեկություն դրսում կամ աշտարակների վրա):
- Հորդորեք անձնակազմին լինել ավելի ուշադիր և հաղորդակցվել ազատազրկված անձանց հետ: Հայտնաբերեք ԿՈՎԻԴ-19-ի ախտանշաններ ունեցող բանտարկյալներին և

ուշադրություն դարձրեք տեղաշարժի ու գործողությունների սահմանափակման արդյունքում ազատագրված անձանց կողմից ցուցաբերվող ցանկացած տարօրինակ ու կասկածելի վարքին:

- Նվազագույնի հասցրեք ձեր անձնակազմի տեղաշարժը ազատագրված անձանց շրջանում՝ չվտանգելով ծառայության անվտանգության և խնամքի ապահովման բաղադրիչը.
- Աշխատակիցներին իրենց հերթափոխի ողջ ընթացքում կցեք բանտարկյալների որոշակի խմբի՝ հիվանդության հնարավոր տարածումը կանխարգելելու նպատակով: Մի՛ կատարեք սովորական պաշտոնական ռոտացիաներ,
- Սահմանափակեք անձնակազմի անմիջական շփումը ազատագրված անձանց հետ: Հրահանգեք, որ անձնակազմը հետևի և շփվի ազատագրվածների հետ հեռավորության վրա (աշտարակներից, ցանկապատերի, դարպասների, ճաղերի հետևից),
- Սահմանափակ թվով աշխատողների հանձնարարեք աշխատել մեկուսացման տարածքում: Նրանց ապահովեք անհրաժեշտ ԱՊՄ-ով,
- Փոփոխեք ռիսկի խմբի պատկանող աշխատողների (ըստ նույն առողջության չափանիշների) առաջադրանքները և սահմանափակեք նրանց շփումը ազատագրված անձանց և մյուս աշխատակիցների հետ:

Պատրաստ եղեք աշխատելու փոքրաթիվ անձնակազմի հետ

- Տեղեկացրեք անձնակազմին, թե ինչու է կարևոր, որ նրանք չզան աշխատանքի, եթե ունեն ԿՈՎԻԴ-19-ի որևէ ախտանշան և ներդրեք այնպիսի ընթացակարգեր, որոնք աշխատանքից բացակայելու պարագայում կապահովեն նրանց վարձատրությունը՝ առանց որևէ տույժի:
- Սահմանեք քրեակատարողական հիմնարկի գործունեության համար անհրաժեշտ աշխատակիցների նվազագույն թիվը: Մշակեք արտակարգ իրավիճակներում գործելու պլան՝ Ձեր անձնակազմի զանգվածային բացակայության դեպքում դիմելով համազգեստ կրող այլ աշխատողների (ոստիկանության, ռազմական կամ համազգեստ կրող այլ աշխատողների)՝ ժամանակավոր աջակցության համար,
- Եթե Ձեր համատեքստում ընդունելի է, դիտարկեք բանտարկյալների վերապատրաստումը, որպեսզի ժամանակավորապես օգնեն բանտարկյալների այլ խմբերին աջակցելու և խնամելու գործում:
- Պատրաստ եղեք բանտարկյալների կողմից կատարվող անկարգություններին / խռովություններին (պարտադրված սահմանափակումների պատճառով):
- Վերապատրաստեք և սովորեցրեք անձնակազմին՝ ինչպես օգտագործել անհատական պաշտպանական միջոցները:

ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ

- Բանտարկյալներին տեղեկացրեք բանտի առօրյայի վրա ԿՈՎԻԴ-19-ի ժամանակավոր ազդեցության մասին (այդ թվում՝ տեսակցություններ ու այլ ծառայություններ): Ընդգծեք

անձնակազմի, ազատագրկված անձանց և համայնքի առողջության պահպանման կարևորությունը:

- Բանտարկյալներին ցույց տվեք տեղեկատվական պաստառները, բացատրեք զետեղված տեղեկությունները և հավաստիացեք, որ նրանք հասկացել են դրանց բովանդակությունը:
- Բանտարկյալներին հորդորեք ԿՈՎԻԴ-19-ի ցանկացած ախտանշան ունենալու դեպքում զեկուցել անձնակազմի որևէ անդամի՝ հանուն բոլորի առողջության և բարեկեցության:
- Կրճատեք խմբերով հավաքվող բանտարկյալների թիվը, փորձեք սահմանափակել բանտարկյալների տեղաշարժը և բացառել տարբեր խմբերի բանտարկյալների շփումը (հատկապես ռիսկի խմբի բանտարկյալների): Սրա համար կարող է պահանջվել հետևյալ գործունեության/ գործողությունների վերակազմակերպում.

- Վերասոցիալիզացիայի միջոցառումներ /միջին մասնագիտական դասընթացներ/աշխատանք,
- Կրոնական ծառայություններ,
- Ժամանցային միջոցառումներ,
- Ազատագրկված անձանց տեղաշարժ (ներսում/դրսում),
- Զբոսանքի ժամ՝ հերթափոխով/ սահմանափակել տարբեր մասնաշենքերից բանտարկյալների միաժամանակ զբոսնելու հնարավորությունը:

ԱՅՑԵԼՈՒՆԵՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ/ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ)

- Այցելուներին տեղեկացրեք ազատագրկված վայր կանոնավոր այցելությունների վրա ԿՈՎԻԴ-19-ի ազդեցության մասին:
- Համոզվեք, որ նրանք տեսնում են տեղեկատվական պաստառները և հասկանում են դրանց բովանդակությունը:
- Դիտարկեք այցելությունները ֆիզիկապես սահմանափակելու և այցելուների, ծառայություն մատուցողների և այլոց հետ հաղորդակցման այլընտրանքային միջոցներ կիրառելու հնարավորությունը:
- Ապահովեք վիրտուալ/հեռախոսային կապի միջոցով տեսակցությունների հասանելիությունը: Վիրտուալ /հեռախոսային կապի միջոցով տեսակցության անցնելու դեպքում պարբերաբար ախտահանեք էլեկտրոնային սարքերը:
- Այցելուների կողմից ազատագրկված անձանց սնունդ, հագուստ կամ դեղորայք բերելու դեպքում ապահովեք հանձնույթների անվտանգ ընդունման, հնարավորության դեպքում՝ ախտահանման և ազատագրկված անձանց բաժանելու հաշվետու գործընթաց: Բանտ մտնող և դուրս եկող բոլոր անձանց գրանցել արտակարգ իրավիճակների համար նախատեսված առանձին գրանցամատյանում:
- Ներդրեք սրբինինգ կատարելու գործընթաց, եթե այցելությունները շարունակեն թույլատրվել: ԹՈՒՅԼ ՉՏՍԼ կորոնավիրուսի ախտանշաններ ունեցող, սրբինինգից հրաժարվող կամ ԿՈՎԻԴ-19-ի հաստատված կամ կասկածվող վարակակրի հետ շփում ունեցած որևէ անձի մուտքը ազատագրկված վայր:

- Հաղորդակցվեք այցելուների հետ և հորդորեք զերծ մնալ ֆիզիկական շփումից և տեսակցություններից՝ հոգուտ իրենց, ազատազրկված անձանց և նրանց ընտանիքի անդամների ու համայնքի առողջության:
- Այցելուների համար ազատազրկման վայրի մուտքի և ելքի մոտ տեղադրեք լվացարաններ և հնարավորության դեպքում տրամադրեք դիմակներ:
- Ապահովեք, որ տեսակցությունների սենյակում հնարավոր լինի պահպանել ազատազրկված անձանց և այցելուների միջև բավականաչափ տարածություն (2 մետր):
- Վարեք ԿՈՎԻԴ-19-ով պայմանավորված արտակարգ իրավիճակի համար նախատեսված առանձին գրանցամատյան՝ ազատազրկման վայր մտնող ու դուրս եկող բոլոր անձանց գրանցելու նպատակով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ/ ՊԱՐԱԳԱՆԵՐ

- Ցուցակագրեք ԿՈՎԻԴ-19-ի տարածումը սահմանափակող անհրաժեշտ պաշտպանության միջոցները/պարագաները (տե՛ս ստորև):
- Համալրեք սննդի, ջրի և դեղորայքի պաշարները:
- Որոշարկեք պաշտպանության միջոցների մատակարարներին/մատակարարման ցանցերը: Հնարավորության դեպքում կատարեք մեծաքանակ գնումներ և պահեստավորեք դրանք:
- Նախատեսեք պաշտպանության հատուկ միջոցներ և ռեժիմ խոցելի տարածքների համար (ընդունարան, բուժկետ, խոհանոց, լվացքատուն, և այլն):
- Դիտարկեք բանտում դիմակներ և այլ անհրաժեշտ պարագաներ արտադրելու հնարավորությունը: Հնարավորության դեպքում դիտարկեք առնվազն 60%-անոց ակոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց պատրաստելու հնարավորությունը (եթե թույլատրելի է՝ ելնելով անվտանգության նկատառումներով պայմանավորված սահմանափակումներից):

ԿՈՎԻԴ-19-Ի ՏԱՐԱԾՈՒՄԸ ՄԱՀՄԱՆԱՓՈՒԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՄ/ ՊԱՐԱԳԱՆԵՐ

- Առաջարկվող ԱՊՄ պարագաներ.



Դիմակներ (մանրամասների համար տե՛ս ստորև)



Աչքերի պաշտպանության միջոցներ



Մեկանգամյա օգտագործման բժշկական ձեռնոցներ



Մեկանգամյա օգտագործման արտահագուստ / կոմբինեզոններ

- Ամենօրյա բժշկական անհրաժեշտության այլ պարագաներ, այդ թվում՝



Անձեռոցիկներ,



Հնարավորության դեպքում՝ հեղուկ օճառ /սովորական օճառ օգտագործելու դեպքում հավաստիացեք, որ այն չի գրգռում մաշկը՝ այդպիսով չխանգարելով ձեռքերի հաճախակի լվացմանը,



Ձեռքերը չորացնելու մեկանգամյա օգտագործման պարագաներ (թղթե սրբիչներ),



Առնվազն 60%-անոց ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոցներ (եթե թույլատրվում է՝ ելնելով անվտանգության նկատառումներով պայմանավորված սահմանափակումներից),



Մաքրող միջոցներ, քլորի լուծույթ, ախտահանիչներ,



Կենցաղային ձեռնոցներ և երկարաճիտ կոշիկներ,



Մակերեսների ախտահանիչ միջոցներ (այդ թվում՝ ցողիչներ (սփրեյներ), որոնք պետք է օգտագործվեն միայն այն դեպքում, երբ ազատազրկված անձինք տարածքում ՉԵՆ):



Դիակների համար նախատեսված պարկեր կամ դրանց այլընտրանք (մեծ, հաստ պլաստիկ պարկեր կամ ցելոֆան):

Մի քանի բառ դիմակների մասին

N-95 կամ FFP2 տեսակի շնչադիմակները նախատեսված են առաջնագծում աշխատող անձնակազմի համար, որոնք անմիջական շփում ունեն ազատազրկման վայրերում ԿՈՎԻԴ-19-ի հաստատված կամ դրա կասկածով բանտարկյալների հետ: Ճիշտ կրելու դեպքում այդ տեսակի դիմակները նվազեցնում են վարակակրից օդակաթիլային ճանապարհով վարակվելու հավանականությունը: Վիրաբուժական դիմակները պետք է կրեն ԿՈՎԻԴ-19-ով հիվանդ կամ դրա ախտանշաններ ունեցող մարդիկ: Այդ դիմակները պաշտպանում են վարակված անձից խոսելիս, հազալիս կամ փռշտալիս փոխանցվող թքի կամ լորձի կաթիլներից: Դիմակների համաշխարհային սդոյամբ պայմանավորված՝ կարելի է դիտարկել նաև այլընտրանքային դիմակների օգտագործման հնարավորությունը՝ հաշվի առնելով, սակայն, որ դրանք պակաս արդյունավետ են: Կարելի է դիտարկել նաև շինարարական դիմակների կամ տնային պայմաններում կարված կտորից դիմակների օգտագործումը և արտադրել դրանք բանտում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՎԻՐՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ի՞ՆՉ Է ԱՅՆ

ԿՈՎԻԴ-19-ը համաշխարհային խնդիր է: Հիվանդությունն ամառնաձմեռան և նոր տեսակի կորոնավիրուսի հետևանքով, որը նախկինում մարդկանց մոտ չի հայտնաբերվել:

ԱՌՏԱՆՇԱՆՆԵՐ

Ջերմություն

Հագ

Շնչառական դժվարություններ

Մկանային ցավ

Մեծամասամբ ԿՈՎԻԴ-19-ն ուղեկցվում է թեթև ախտանշաններով, այդ թվում՝ քթից արտադրություն, կոկորդի ցավ, հագ, ջերմություն և ընդհանուր հոգնածություն: Այն կարող է ավելի ծանր ընթացք ունենալ որոշ մարդկանց մոտ և կարող է հանգեցնել թոքաբորբի և/կամ շնչառական բարդությունների: Որոշ դեպքերում վարակը կարող է հանգեցնել մահվան:

ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿՈՎԻԴ-19-Ը

ԿՈՎԻԴ-19-ը ամենից արագ փոխանցվում է վարակակրի հետ սերտ (մինչև 1 մետր հեռավորության վրա) շփման հետևանքով: Երբ ԿՈՎԻԴ-19-ով վարակված անձը հագում է կամ փռոցով, արտազատվում են փոքրիկ կաթիլներ, և եթե շատ մոտ եք գտնվում, ապա դուք կվարակվեք այդ վիրուսով:

Մարդը կարող է վարակվել նաև ախտահարված մակերեսներին կամ իրերին և ապա իր դեմքին դիպչելով (օրինակ՝ դռան բռնակին դիպչելու կամ ձեռքով բարնելու և ապա իր դեմքին դիպչելու հետևանքով): Այդ պատճառով **շատ կարևոր է** ախտահանել շրջապատը:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳՎԱԾ

ԿՈՎԻԴ-19-ի՝ մարդկանց վրա ազդեցությունը դեռևս ամբողջապես ուսումնասիրված չէ: Ռիսկին առավել ենթակա են տարեցները, հարակից այլ հիվանդություններ, այդ թվում՝ աթոս/ քրոնիկ շնչառական հիվանդություն, շաքարախտ, սրտային հիվանդության կամ իմունային համակարգն ընկճող ցանկացած այլ հիվանդություն ունեցող անձինք:

ԻՆՉՊԵ՞Ս ԱՅՆ ԿԱԶՂԻ ԲԱՆՏԵՐԻ ՎՐԱ

Բանտերում ԿՈՎԻԴ-19-ի տարածումը կանխարգելելու նպատակով բանտային առօրյայում կպահանջվեն թեև **Ժամանակավոր**, բայց **զգալի** փոփոխություններ, այդ թվում՝ ազատազրկման վայր մուտքի, տեղաշարժի և բանտարկյալների գործողությունների սահմանափակումներ: Այդ խանգարող, բայց ժամանակավոր միջոցառումներն անհրաժեշտ են անձնակազմին, բանտարկյալներին և համայնքը ԿՈՎԻԴ-19-ից պաշտպանելու համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԼՎԱՅՎԵՔ

Հաճախակի լվացեք ձեռքերը օճառով և ջրով, հատկապես ուտելուց առաջ և զուգարան գնալուց առաջ և հետո:

ԽՈՒՍԱՓԵՔ

Մի՛ դիպեք Ձեր դեմքին: Մենք հաճախ ենք ձեռքերով տարբեր մակերեսների դիպչում, որոնք կարող են ախտահարված լինել: Կեղտոտ ձեռքերով դեմքին դիպչելիս կարող եք ախտահարված մակերեսից վարակը փոխանցել Ձեզ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հնարավորության դեպքում առնվազն 2 մետր հեռավորություն պահպանեք այլ մարդկանցից և խուսափեք ավելորդ ֆիզիկական շփումից, հատկապես երբ մարդը հագում է, փռչում կամ ջերմություն ունի:

ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Հազալիս կամ փռչալիս ծածկեք Ձեր քիթը և բերանը անձեռոցիկով կամ ծալած արմունկով, ոչ թե ձեռքով: Օգտագործված անձեռոցիկն անմիջապես դեն նետեք և անմիջապես լվացեք ձեռքերն օճառով և ջրով:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՈՎԻԴ-19-ի ախտանշաններ ունենալու կամ այլոց մոտ դրանք նկատելու դեպքում անմիջապես տեղեկացրեք ազատագրկման վայրի ղեկավարությանը և դիմեք բժշկի:

ՊԱՀՊԱՆԵՔ ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ

Պահպանեք հանգստություն և հետևեք ազատագրկման վայրի անձնակազմի գրավոր և բանավոր հրահանգներին:

ԻՆՉՊԵՍ ԼՎԱՆԱԼ ՁԵՌՔԵՐԸ

Թրջել ձեռքերը

Օճառել

Շփել ափերը

Օճառել ձեռքերի հակառակ կողմը

Տրորել մատների արանքները

Մի ձեռքի մատներով շփել մյուսի մատները

Օճառել բթամատերը

Օճառել եղունգների տակը

Պարզաջրել ձեռքերը

Չորացնել ձեռքերը անձեռոցիկով

Փակել ծորակը անձեռոցիկով

Ձեր ձեռքերը մաքուր են

ԿՈՎԻԴ-19-ԻՆ

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ
ԱԶԱՏԱԶՐԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ
ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ
ՎԱՅՐԻ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԵՏ



- Անձնակազմի և ազատագրված անձանց հետ հաղորդակցվեք հեռավորությունից բանավոր հրահանգավորման և ուղղորդման միջոցով խուսափելով անմիջական ֆիզիկական շփումից: Բացատրեք ցույց տալու/ցուցադրելու միջոցով:
- Հիվանդության հնարավոր ախտանշանների և ազատագրված անձանց շրջանում հնարավոր անկարգությունների նշանների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով առավել զգոն եղեք, հսկեք և հաղորդակցվեք ազատագրված անձանց հետ:
- Գրանցեք կամ զեկուցեք ազատագրված անձանց և անձնակազմի շրջանում հիվանդության բոլոր հնարավոր ախտանշանները:
- Հնարավորինս սահմանափակեք անմիջական շփումը ազատագրված անձանց հետ, ցածր ռիսկի խմբի ազատագրվածներին ենթարկեք տեսողական ստուգման:
- Ցածր ռիսկի խմբի ազատագրվածներին ուղեկցող անձնակազմին հրահանգավորեք բանավոր կամ ժեստերով:
- Մի՛ մոտեցեք և մի՛ կանգնեք ուղիղ ազատագրված անձանց դիմաց, նվազեցրեք ազատագրվածի կողմից Ձեր վրա հազալու կամ Ձեր ուղղությամբ շնչելու ռիսկը:
- Հնարավորության դեպքում ազատագրվածներին հաշվեք հեռվից:
- Ազատագրվածների հետ ուղղակիորեն հաղորդակցվելու կամ ուղղորդելու անհրաժեշտության դեպքում հագեք ձեռնոցներ, աչքերի պաշտպանության միջոցներ և դիմակ, կամ եթե ձեռնոցներ չունեք, ազատագրվածների հետ անմիջապես առնչվելուց առաջ և անմիջապես հետո լվացեք Ձեր ձեռքերը:
- Մի՛ կատարեք տարածքի ստուգում առանց ձեռնոցների: Եթե ձեռնոցներ չկան, հնարավորինս խուսափեք մակերեսներին դիպչելուց և լվացեք ձեռքերը ստուգումից առաջ և անմիջապես հետո:
- Ձեր և ազատագրված անձի միջև պահպանեք առնվազն 2 մետր հեռավորություն՝ հարցաքննության, խորհրդատվության, ընդունման կամ ազատման ժամանակ: Եթե գրասենյակում եք, հեռավորություն պահպանեք սեղանի և աթոռների միջոցով:
- Առկայության դեպքում օրական մի քանի անգամ մաքրեք Ձեր սարքերը ախտահանիչով (այդ թվում՝ ռադիոկապի միջոցները, հեռախոսը, ձեռնաշղթան, ձեռնաշղթայի բանալիները, և այլն):
- Հնարավորության դեպքում տուն գնալուց առաջ փոխեք Ձեր հագուստը և կոշիկները:
- Հիշեցրեք անձնակազմին մարդու իրավունքների ընդունված նորմերին համապատասխան ընթացակարգերը, ինչպես նաև ազատագրված անձանց հատուկ խոցելիության և նրանց հանդեպ ստանձնած հոգատարության պարտավորության մասին:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ / ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ 1

ՊԱՀՊԱՆԵՔ ՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆ

Ձեր առողջությունն ու ապահովությունը կարևոր են:

ՀԱՄԲԵՐՍԱՐ ԵՂԵՔ

Բոլոր սահմանափակումները, ընթացիկ ծրագրերի և գործունեության տեսակների կրճատումը կամ չեղարկումը **ժամանակավոր** են և արվում են հանուն բոլորի, այդ թվում՝ Ձեր ընտանիքի և համայնքի առողջության և ապահովության:

ՀԵՏԵՎԵՔ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

Հետևեք պատերին փակցված նախազգուշական միջոցներին:

ԼՍԵՔ

Հետևեք ազատազրկման վայրի ղեկավարության / անձնակազմի կողմից տրվող հրահանգներին/հրամաններին:

ՀԱՐՑՐԵՔ

Եթե այցելուները սնունդ, հագուստ կամ դեղորայք են բերում, խնդրեք ազատազրկման վայրի անձնակազմին պարզաբանել նման իրերը հանձնելու ընթացակարգը:

ԴԻՄԵՔ

Հարցրեք՝ արդյոք կա Ձեր ընտանիքի հետ հաղորդակցվելու որևէ տարբերակ:

ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵՔ

Եթե Ձեր խցում կամ ընդհանուր կացարանում մի քանի ազատազրկված անձ կա, հնարավորինս հեռավորություն պահպանեք միմյանցից և քնեք՝ փոխելով ձեր դիրքը:

ԿԱՆԽԱՐԳԵԼԵՔ

Պարբերաբար լվացեք Ձեր ձեռքերը, մարմինը, հագուստը և անկողնային պարագաները օձառով և ջրով:

ՕՂԱՓՈԽԵՔ ՏԱՐԱԾՔԸ

Մի՛ ծածկեք խցի պատուհանները և դուռը: Հաճախ օդափոխեք:

ՄԱՔՐԵՔ

Ձեր խցում կամ ընդհանուր կացարանում մաքրող միջոցների վերջանալու դեպքում դիմեք ազատազրկման վայրի անձնակազմին՝ դրանք Ձեզ տրամադրելու խնդրանքով:

ԽՈՒՍԱՓԵՔ

Խուսափեք ընդհանուր ջրի շփից, սպասքից, ափսեներից ու բաժակներից օգտվելուց:

ՊԱՀՊԱՆԵՔ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ

Ավելի հաճախ լվացեք Ձեր խուցը կամ ընդհանուր կացարանը օձառով և ջրով:

ՕԳՆԵՔ

Եթե վատառողջ եք կամ մեկ այլ ազատազրկված անձի մոտ նոր կորոնավիրուսի ախտանշաններ եք նկատում, հնարավորինս հեռավորություն պահպանեք և անմիջապես տեղեկացրեք ազատազրկման վայրի անձնակազմին: Հարցերի դեպքում ևս դիմեք ազատազրկման վայրի անձնակազմին:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ ԱՅՑԵԼՈՒԻ ՀԵՏ / ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՔ

ԿՈՎԻԴ-19-ով պայմանավորված՝ ազատագրկման վայր մուտք գործելու ընթացակարգը փոփոխվել է: Անձնակազմի, ազատագրկված անձանց և համայնքի առողջությունն առաջնահերթություն է:

ՀԵՏԵՎԵՔ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ

Ազատագրկման վայր մուտք գործելու ընթացակարգը **ժամանակավորապես** փոփոխվել է: Խնդրում ենք հարգել և հետևել ազատագրկման վայրի անձնակազմի հրահանգներին:

ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵՔ

Բոլոր այցելուները ենթարկվում են պարտադիր սքրինինգային բուժզննման: Եթե Դուք ունեք ԿՈՎԻԴ-19-ի ախտանշաններ կամ հրաժարվում եք սքրինինգային բուժզննում անցնել, Ձեզ չի թույլատրվի մուտք գործել ազատագրկման վայր:

ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵՔ

Խնդրում ենք միմյանցից առնվազն 2 մ հեռավորություն պահպանել:

ՀԱՐՑՐԵՔ

Եթե Ձեր ընտանիքի անդամի համար իրեր եք բերել, բայց ԿՈՎԻԴ-19-ի պատճառով տեսակցություն չի թույլատրվում, հարցրեք անձնակազմին, թե ինչպես կարող եք իրերը փոխանցել ազատագրկվածին:

ԴԻՄԵՔ

Եթե տեսակցություններ չեն թույլատրվում, հարցրեք՝ արդյոք կա Ձեր հարազատի հետ հաղորդակցվելու որևէ այլ տարբերակ:

ՄՔՐԻՆԻՆԳ՝ ՄՈՒՏՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Սպասման գոտի. Պահպանեք հեռավորություն և հետևեք հրահանգներին
 2. Իրերի հանձնման գոտի. Ազատազրկման վայրի անձնակազմը ընդունում է ազատազրկված անձանց համար թույլատրելի պարագաները
 3. Սքրինինգի գոտի. Պատասխանեք հարցերին և լրացրեք գրանցամատյանը
 4. Անվտանգության գոտի. Հետևեք անվտանգության ընթացակարգերին
 5. Այցելուների գոտի. լվացեք Ձեր ձեռքերը օճառով և ջրով
 6. Ազատազրկված անձանց տեսակցության գոտի. պահպանեք հեռավորություն
 7. Ելքի գոտի. ազատազրկման վայրից հեռանալիս կրկին լվացեք Ձեր ձեռքերը
- Ազատազրկման վայրի անձնակազմ Ա/. . . . Ա/. . . . Ա/զնացեք աշխատանքի
- Տեսակցություն թույլատրելու դեպքում Բ/. . . . Բ/. . . . ախտանշաններ ունենալու դեպքում Ձեզ կխնդրեն հեռանալ . . . Բ/
- Տեսակցություն չթույլատրելու դեպքում Գ/. Բ/Ձեզ կխնդրեն հեռանալ



ԻՆՉ

- ԿՈՎԻԴ-19-ը պոտենցիալ առումով մահացու վիրուս է, որին պետք է լուրջ վերաբերվել:
- Ազատագրկման վայրի ղեկավարությունը հնարավոր ամեն բան անում է անձնակազմին, ազատագրկված անձանց և համայնքը կորոնավիրուսից պաշտպանելու համար:
- Եթե կորոնավիրուսի ախտանշաններ ունեք (ջերմություն, քթից արտադրություն, հագ, դժվարացած շնչառություն, դիսկոմֆորտ կամ հոգնածություն), ապա մի՛ եկեք աշխատանքի, այլ կապ հաստատեք ազատագրկման վայրի ղեկավարի կամ նրա տեղակալի հետ: Ինքնամեկուսացեք 14 օր՝ պաշտպանելու Ձեր ընտանիքին, գործընկերներին և ազատագրկվածներին: Հնարավորության դեպքում կապ հաստատեք առողջապահական կենտրոնի/բուժքրոջ/բժշկի հետ:
- Ազատագրկման վայրի առօրյան ժամանակավորապես կփոփոխվի: Սահմանափակող միջոցառումները (տեղաշարժի, խմբային հաղորդակցության սահմանափակում, տեսակցությունների սահմանափակում կամ չեղարկում) կարող են ազատագրկվածներին մոտ դժգոհություն և անհանգստություն առաջացնել: Խոսեք և բացատրեք, որ սահմանափակող միջոցառումները (այդ թվում՝ կրճատված կամ չեղարկված տեսակցությունները) նախաձեռնվել են իրենց և իրենց ընտանիքներին պաշտպանելու համար:
- Մշտադիտարկեք ազատագրկված անձանց և նրանց շրջանում որևէ անկարգություն, ագրեսիվ բողոք կամ բռնի վարքագիծ նկատելու դեպքում անմիջապես զեկուցեք ղեկավարությանը:
- Անվտանգությունն ու ապահովությունը այս ժամանակահատվածում կարևորագույն նշանակություն ունեն. այնուամենայնիվ, դրանք ապահովելու լավագույն միջոցը ազատագրկվածների հետ հաղորդակցվելն է՝ հարգելով նրանց արժանապատվությունը և այս ժամանակահատվածում ըմբռնումով մոտենալով նրանց դժգոհությանը:

ԻՆՉՊԵՍ

- Հնարավորինս ճշգրիտ ու ժամանակին տեղեկություն տրամադրեք իրավիճակի և ձեռնարկվող միջոցառումների մասին:
- Մի՛ նվազեցրեք կամ չափազանցրեք վտանգի աստիճանը:
- Լրացուցիչ տեղեկություն տրամադրեք՝ թույլ չտալու համար, որ մարդիկ մտածեն, թե իրենցից ինչ-որ կարևոր բան թաքցնում են:
- Քննարկեք իրավիճակի զարգացման վատթարագույն սցենարները:

- Տեղեկացրեք Ձեր անձնակազմին, որ հասկանում եք նրանց մտահոգությունները և կփորձեք արձագանքել դրանց:
- Օրինակ ծառայեք. որպես ազատազրկման վայրի ղեկավար՝ դուք նույնքան վտանգված եք, որքան ազատազրկման վայրի անձնակազմն ու ազատազրկված անձինք: Օգտվելով առիթից՝ դրսևորեք օրինակելի վարքագիծ.
 - Պահպանեք հանգստություն,
 - Ընդունեք վտանգի մեծությունն ու բարդությունը,
 - Մնացեք ուժեղ և տոկուն,
 - Քաջալերեք մյուսներին և դրսևորեք այլասիրություն, հույս և վճռականություն,
 - Դրսևորեք օրինակելի վարքագիծ՝ հետևելով խորհուրդներին և ընդունված կանոնակարգին, հաճախակի լվացեք ձեռքերը և պաշտպանեք Ձեզ, անձնակազմին և ազատազրկված անձանց:



ԻՆՉ

- ԿՈՎԻԴ-19-ը պոտենցիալ առումով մահացու վիրուս է, որին ՊԵՏՔ է լուրջ վերաբերվել:
- Ազատագրկման վայրի ղեկավարությունը հնարավոր ամեն բան անում է Ձեզ կորոնավիրուսից պաշտպանելու համար:
- Սահմանված բոլոր միջոցները ժամանակավոր են: Որքան ավելի խստորեն հետևենք ղեկավարության հրահանգներին, այնքան ավելի արագ կկայունանա իրավիճակը:
- Եթե կորոնավիրուսի ախտանշաններ ունեք (ջերմություն, հազ, դժվարացած շնչառություն), ապա հնարավորինս շուտ տեղեկացրեք ազատագրկման վայրի անձնակազմին և հետևեք հրահանգներին:
- Ազատագրկման վայրի առօրյան ժամանակավորապես կփոփոխվի՝ բոլորին կորոնավիրուսից պաշտպանելու, ազատագրկման վայր վիրուսի ներթափանցումն ու Ձեզ վրա դրա հնարավոր ազդեցությունը կանխելու նպատակով: Հարցրեք ազատագրկման վայրի անձնակազմին, թե ինչ փոփոխություններ են կատարվել:

ԻՆՉՊԵՍ

- Պարզ արտահայտվեք և մի՛ տրամադրեք հակասական տեղեկություններ:
- Ռիսկերի մասին տեղեկատվությունը չափազանց մի՛ մեղմացրեք:
- Մի՛ ստեք և անկեղծ եղեք:
- Հարգալից և արժանապատվորեն վերաբերվեք ազատագրկվածներին: Հաշվի առեք նրանց խոցելի վիճակը:
- Օրինակ ծառայեք. որպես ազատագրկման վայրի աշխատողներ՝ Դուք նույնքան վտանգված եք, որքան ազատագրկված անձինք: Օգտվելով առիթից՝ դրսևորեք օրինակելի վարքագիծ.
 - Պահպանեք հանգստություն,
 - Ընդունեք վտանգի մեծությունն ու բարդությունը,
 - Մնացեք ուժեղ և տոկուն,
 - Քաջալերեք մյուսներին և դրսևորեք այլասիրություն, հույս և վճռականություն,
 - Դրսևորեք օրինակելի վարքագիծ՝ հետևելով խորհուրդներին և ընդունված կանոնակարգին, հաճախակի լվացեք ձեռքերը և պաշտպանեք Ձեզ և ազատագրկված անձանց:



- ԿՈՎԻԴ-19-ի ախտանշանների ի հայտ գալու պահից սկսած՝ վարակակիրը պետք է դիմակ կրի և այլ մարդկանցից անմիջապես մեկուսացվի առանձին տարածքում, նախընտրելի է՝ ազատազրկման վայրի տարածքում գտնվող առանձին շենքում:
- Ազատազրկման վայրի տարածքի սահմանափակ լինելու և ազատազրկված անձանց տեղաշարժի անհնարինության դեպքում դիտարկեք տեղի առողջապահական հաստատություններին դիմելու կամ վրաններ ձեռք բերելու և դրանք հանգստի գոտում տեղադրելու հնարավորությունը:
- Հնարավորության դեպքում ապահովեք նաև բոլոր հայտնի կոնտակտավոր անձանց կանխարգելիչ մեկուսացում (համաձայն ԿՈՎԻԴ-19-ի կատեգորիաների):
- Նվազագույնի հասցրեք վարակված բանտարկյալների հետ շփվող անձնակազմի, հատկապես՝ ոիսկի խմբին պատկանող աշխատակիցների թիվը:
- Մանրակրկիտ ախտահանեք այն ազատազրկված անձի խուցը, որի մոտ կասկածվում կամ հաստատվել է ԿՈՎԻԴ-19-ը:
- Բացարձակապես նվազեցրեք մեկուսացված անձի տեղաշարժը ԿՈՎԻԴ-19-ի մեկուսացման տարածքից դուրս:
- Ապահովեք, որ անձը բժշկական մեկուսացման տարածքից դուրս մշտապես կրի դեմքի պաշտպանության միջոցներ, ինչպես նաև այն ժամանակ, երբ որևէ այլ անձ մտնում է այդ տարածք: Դիմակները պետք է փոխել առնվազն ամեն օր, կամ երբ տեսանելիորեն կեղտոտվում են կամ թրջվում:
- Մեկուսացման ընթացքում մեկուսացված անձը պետք է առնվազն օրը երկու անգամ բժշկական հսկողության տակ լինի, որի ընթացքում պետք է կատարվի ջերմաչափում և ԿՈՎԻԴ-19-ի ախտանշանների ստուգում:
- Քրեակատարողական հիմնարկները պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները ԿՈՎԻԴ-19-ի կասկածով անձանց անհատական բժշկական մեկուսացման մեջ պահելու ուղղությամբ: Խմբային մեկուսացումը պետք է կիրառել ծայրահեղ դեպքերում, երբ այլ տարբերակ չկա:
- Եթե խմբային մեկուսացումն անհրաժեշտ է, փորձեք ԿՈՎԻԴ-19-ի հաստատված (թեստավորված) դեպքերն առանձնացնել կասկածվող դեպքերից (ախտանշաններ ունեցողներից): Ապահովեք, որ բոլորը կրեն դեմքի պաշտպանության միջոցներ և աշխատեք, որ բոլոր բանտարկյալները պահպանեն պահանջվող 2 մ հեռավորությունը:
- Ազատազրկման վայրի անձնակազմից պետք է նշանակել աշխատակիցներ՝ բացառապես այդ անձանց հնարավորինս մշտադիտարկելու համար, և ԱՊՄ կրելու հարցում այդ աշխատակիցներին պետք է տրվի առաջնահերթություն:

Բժշկական մեկուսացման մեջ գտնվող ազատագրկվածներին պետք է տրամադրել համապատասխան սնունդ, առանձին սանհանգույցից օգտվելու հնարավորություն և անհրաժեշտ այլ պարագաներ:

Բժշկական մեկուսացումը պետք է պահպանել մինչև.

Թեստավորման միջոցով պարզվի՝ արդյոք նշված անձինք դեռևս վարակիչ են.

Անձն առնվազն 72 ժամ ջերմություն չի ունեցել՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի ազդեցության, ԵՎ

Մյուս ախտանշանները նվազել են (օր՝ հազ, դժվարացած շնչառություն), ԵՎ

Առնվազն 24 ժամվա տարբերությամբ արված առնվազն երկու թեստի պատասխանները բացասական են եղել:

Թեստավորում ՉԱՆՑԱԾ անձանց դեպքում.

Անձն առնվազն 72 ժամ ջերմություն չի ունեցել՝ առանց ջերմիջեցնող դեղորայքի ազդեցության, ԵՎ

Մյուս ախտանշանները նվազել են (օր՝ հազ, դժվարացած շնչառություն), ԵՎ

Առաջին ախտանշանների ի հայտ գալուց հետո անցել է առնվազն 7 օր:

Եթե ԿՈՎԻԴ-19-ով վարակված անձն ազատ է արձակվում ազատագրկման վայրից բժշկական մեկուսացման ժամանակահատվածում, անհրաժեշտ է կապ հաստատել հանրային առողջապահության հաստատության հետ՝ նրա ապահով տեղափոխումը կազմակերպելու, անհրաժեշտ բուժօգնությունը և բժշկական մեկուսացումը շարունակելու նպատակով և նախապայմանով:

Ազատագրկման վայրում մահվան դեպքերի գրանցման դեպքում.

Դիակը օրեր շարունակ կարող է վարակի տարածման միջոց լինել,

Դիակը կնքեք հատուկ նախատեսված պարկի, հաստ պլաստիկ տոպրակի կամ թաղանթի մեջ,

Դիտարկեք սառեցման համակարգ ունեցող սենյակը որպես ժամանակավոր դիախերձարան օգտագործելու հնարավորությունը,

Այլ տարբերակների բացակայության դեպքում դիտարկեք 12 ժամվա ընթացքում դիակիզման հնարավորությունը, սակայն հարկավոր է հնարավորության սահմաններում գործել հանգուցյալի կամ նրա ընտանիքի ցանկությանը և կրոնական արարողություններին համապատասխան:

Հնարավորության դեպքում լուսանկարներով գրանցեք մահը, զեկուցեք այն պատկան մարմիններին և հետևեք ազատագրկման մեջ մահվան դեպքերում կիրառվող ընթացակարգին:

ԱՇԽԱՏԱՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ

ԿՈՎԻԴ-19-ԻՆ

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Արդարադատության և ուղղիչ գործողությունների ծառայություն
Իրավունքի գերակայության և անվտանգության հաստատությունների գրասենյակ
ՄԱԿ-ի Խաղաղապահ գործողությունների վարչություն
dpo-jcs@un.org

Խաղաղության պահպանման բաժին
ՄԱԿ-ի Վերապատրաստման և հետազոտությունների ինստիտուտ
ptp@unitar.org

#KnowledgeToLead

